ՍՆՆԴԻ ԱՌԱՔԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուսումնասիրության արդյունքներ

2024

«Սննդի առաքիչների աշխատանքային պայմանները» ուսումնասիրությունն իրականացվել է «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» (APR GROUP) հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պատվերով՝ Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի աջակցությամբ:

Ուսումնասիրության շրջանակում ներկայացված տեսակետները, կարծիքները և եզրակացությունները կարող են չհամընկնել Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պաշտոնական դիրքորոշման հետ:

Սպասարկման ոլորտը Հայաստանի Հանրապետությունում սրընթաց զարգացում է ապրում: Դրան զուգահեռ աճում է ոլորտում ներգրավված անձանց թիվը, որը ներառում է ամենատարբեր տարիքի, սեռի, սոցիալական կարգավիճակի անձանց, ինչպես նաև աշխատանքային միգրացիայի հետևանքով Հայաստան ժամանած օտարերկրացիների:

Աշխատողների մեծ մասը չունեն աշխատանքային տարրական իրավունքներ և, հետևաբար, չեն կարողանում պաշտպանել դրանք: Աշխատակիցների հիմնական խնդիրներն են աշխատանքի վտանգավոր պայմանները, անարդար եկամուտները և կազմակերպչական տարբեր խոչընդոտները: Ինչպե՞ս են կանոնակարգվում աշխատանքային հարաբերությունները, պայմանները, որքանո՞վ են խախտվում աշխատանքային իրավունքները և ինչպե՞ս են դրանք պաշտպանվում, արդյո՞ք իրազեկ են իրենց իրավունքներից այս և աշխատանքային իրավահարաբերություններին վերաբերող այլ հարցեր պարզելու նպատակով 2024 թվականի մարտ - ապրիլ ամիսներին իրականացվել է «Սննդի առաքիչների աշխատանքային պայմանները» ուսումնասիրությունը՝ սննդի առաքիչների աշխատանքային գործունեություն իրականացնելու հետ կապված խնդիրները բացահայտելու, կարիքները մասնակի գնահատելու, աշխատաշուկայում արդար պայմաններ ստեղծելու անհրաժեշտ գործիքակազմերը վեր հանելու համար: Իրականացված հարցումների արդյունքների հիման վրա ներկայացվել են առաջարկություններ արհմիություններին, պետական լիազոր մարմիններին և ոլորտում ակտիվ կազմակերպություններին անհրաժեշտ տեխնիկական և իրավական խոչընդոտները վերացնելու համար:

Ստորև ներկայացվում է իրականացված ուսումնասիրության մեթոդաբանությունը, հիմնական բացահայտումները, առաջարկություններ արհմիություններին և համապատասխան պետական լիազոր մարմիններին:

Ուսումնասիրությունն իրականացվել է սոցիոլոգիական հետազոտությունների քանակական մեթոդաբանությամբ՝ դեմ առ դեմ հարցազրույց: Հետազոտության արդյունքները վերլուծելիս՝ տոկոսային արտահայտություն ստացած մեծությունները կլորացվել են մինչև տասնորդական:

Ընտրանքում ներառվել են 204 առաքիչներ՝ ազգությամբ հայ 156, հնդիկ 38, ռուս 10 հոգի:

Առաքիչների աշխատանքային պայմանների ուսումնասիրու-թյան նպատակով իրականացրած հարցումների ընթացքում հարցվողների 91,8%-ը եղել են արական սեռի ներկայացուցիչներ, իսկ 8,2 %-ը՝ իգական սեռի, որոնցից 3,9 %-ը եղել են մինչև 18 տարեկան, 33,9%-ը՝ 18-25 տարեկան, 36,8-ը՝ 26-35 տարեկան, 17,2%-ը՝ 36-45 տարեկան, 6,4%-ը՝ 46-55 տարեկան, 2,0%-ը՝ 56-65 տարեկան, իսկ 0,5%-ը՝ 66 և ավելի տարեկան: Հարցվողները եղել են Glovo, Yandex eats, Menu.am, Yeremyan projects, Buy.am, KFC և այլ կազմակերպության առաքիչներ:

Գծապատկեր 1.



Գծապատկեր 2.



Գծապատկեր 3.



Անհրաժեշտ է նշել, որ հարցումներին մասնակցել են ոչ միայն ազգությամբ հայ, այլ նաև ազգությամբ հնդիկ և ռուս առաքիչներ: Հարցվողների 76,5%-ն ազգությամբ եղել են հայ, 20,6%-ը՝ հնդիկ, 2,9%-ը՝ ռուս:

Գծապատկեր 4.



Ուսումնասիրելով հարցվողների աշխատանքային պայմանները և աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը՝ անհրաժեշտ էր հարցաթերթիկում ներառել հետևյալ հարցերը.

- Որքա՞ն ժամանակ է, ինչ գտնվում եք Հայաստանում.
- Որքա՞ն ժամանակ եք աշխատում առաքիչ.
- Ո՞րն է Ձեր հիմնական զբաղմունքը:

Հայաստանում գտնվելու տևողությունը հանդիսանում է կարևոր գործոն, քանի որ այն կարող է ազդել աշխատանքային միջավայրին աշխատողների հարմարվելու, ներպետական օրենսդրությամբ սահմանված աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության և աշխատանքից բավարարված լինելու վրա: Բացի այդ, մյուս երկու հարցերի պատասխանները պատկերացումներ են տալիս, թե արդյոք առաքիչները աշխատում են միայն որպես առաքիչ, թե՞ զուգահեռաբար աշխատում են այլ վայրում կամ այլ զբաղմունք ունեն, որոնք կարող են ազդել նրանց կարիերայի առաջընթացի, հմտությունների զարգացման վրա:

Գծապատկեր 5.



Գծապատկեր 6.



Հետաքրքիր է այն փաստը, որ հարցվողների 78,4%-ն աշխատում է որպես առաքիչ, 12,7%-ն աշխատում է որպես առաքիչ, սակայն իրականացնում է այլ աշխատանք, 8,8%-ն ուսանող է և դրա հետ մեկտեղ աշխատում է առաքիչ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հարցվողները առաքման ոլորտում աշխատանքը համարում են հիմնական աշխատանք և եկամտի միակ աղբյուր: Այստեղից բխում է մեկ այլ կարևոր հարց, թե որքա՞ն է կազմում առաքիչների միջին ամսական եկամուտը: Համաձայն Գծապատկեր 8-ի՝ հարցվողների 40,7%-ի ամսական եկամուտը կազմում է 150001-ից մինչև 350000 ՀՀ դրամ, 22,5%-ինը՝ 75000-ից մինչև 150000 ՀՀ դրամ: Ամսական միջին եկամտի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը նշված է Գծապատկեր 8-ում:

Գծապատկեր 7.



Գծապատկեր 8.



Առաքիչների աշխատանքային պայմանները համապարփակ ուսումնասիրելու համար հարցաշարն ընդգրկել է ամուսնական կարգավիճակի, կացարանի տեսակի, անվտանգության զգացումների, կրթության, ծախսերի վերաբերյալ հարցեր: Հարցվողների ամուսնական կարգավիճակի վերաբերյալ հարցերը հնարավորություն են տալիս հասկանալու, թե ինչպես է աշխատանքն ազդում անձնական կյանքի և աշխատանքի հավասարակշռության, ֆինանսական պատասխանատվության, ինչպես նաև հարցվողների աշխատանքի բավարարվածության վրա:

Հարցումների արդյունքում պարզվել է, որ հարցվողների 54,9% -ը երբևէ ամուսնացած չի եղել (տե՛ս Գծապատկեր 9): Իսկ ինչ վերաբերում է հարցվողների բնակության վայրի տեսակի հարցադրմանը, այն թույլ է տալիս պատկերացում կազմել առաքիչ աշխատողների կյանքի որակի և ֆինանսական միջոցների մասին: Հարցումները նկարագրել են մի պատկեր, որտեղ հարցվողների 59,3%-ը բնակվում է բազմաբնակարանային շենքի բնակարանում, 30,4%-ը՝ առանձնատանը, 2,9%-ը՝ սոցիալական տանը, խնամքի հաստատությունում, 2,5%-ը՝ հյուրանոցում/հյուրատանը: Հարցումների արդյունքում պարզ է դարձել նաև, որ հարցվող առաքիչների շրջանում արձանագրվել են այնպիսի առաքիչներ, ովքեր բնակվում են բնակության համար չնախատեսված հանրային տարածքում (2,5%), կոմունալ ընդհանուր պայմաններով բնակության վայրում (1,0%) և այլ պայմաններում, որոնք նշված չեն եղել հարցի պատասխանների տարբերակներում (1,0%): Հատկանշական է, որ հարցվողների 0,5% -ը նշել է, որ կացարան չունի և անօթևան է (տե՛ս Գծապատկեր 10):

Գծապատկեր 9.



Գծապատկեր 10.



Երկրում անվտանգության զգացումը կարևոր գործոն է առաքիչների աշխատանքային միջավայր ձևավորելու համար, քանի որ նրանք իրենց աշխատաժամանակի գրեթե մեծ մասն անցկացնում են դրսում, հաճախ լինում են տարբեր թաղամասերում և շփվում են զանազան մարդկանց հետ: Առաքիչների աշխատանքային պարտականություններն արդյունավետ և անվտանգ կատարելն ամբողջությամբ կապված է նաև երկրում տիրող անվտանգությունից: Նրանց աշխատանքի վրա կարող են բացասաբար ազդել հանցավորության մակարդակը, փողոցների վատ լուսավորվածությունը և անբարեկարգ փողոցները: Կարևոր է նշել, որ հարցման մասնակից առաքիչ-ների 46,1%-ը նշել է, որ իրենք Հայաստանում իրենց զգում են որոշ չափով ապահով/անվտանգ, 26,5%-ը՝ շատ ապահով/անվտագ, 18,1%-ը՝ փոքր-ինչ ապահով/ոչ անվտանգ: Միայն հարցվողների 8,3%-ը պատասխանել է, որ իրեն լիովին ոչ ապահով/ոչ անվտանգ է զգում Հայատասնում, իսկ 1,0%-ը՝ դժվարացել է պատասխանել:

Գծապատկեր 11.



Գծապատկեր 12.



Առաքիչների կրթության մակարդակը կարող է ազդել աշխատանքի հնարավորությունների վրա: Հարցման արդյունքները, որոնք զետեղված են Գծապատկեր 12-ում, թույլ են տալիս եզրակացնել, որ կրթության և զբաղվածության միջև առկա է բաց, ինչպես նաև կրթության և աշխատանքի շուկայի միջև անհամապատասխանություն:

Հաջորդ հարցը, որը տրվել է հարցվողներին, վերաբերվել է, թե որքան գումար է ծախսում ամսվա կտրվածքով: Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 13-ում 32,4%-ը նշել է, որ ամսվա կտրվածքով ծախվսում է 75000-ից մինչև 150000 ՀՀ դրամ գումար, 31,9 %-ը՝ 150001-ից մինչև 350000 ՀՀ դրամ, 16,2%-ը՝ մինչև 75000 ՀՀ դրամ (տե՛ս Գծապատկեր 13): Կարելի է եզրահանգել, որ ամսական ծախսերը տատանվում են Գծապատկեր 13-ի առաջին, երկրորդ տողով սահմանված սանդղակով:

Գծապատկեր 13.



Հարցում իրականացնողները փորձել են հարցման միջոցով պարզել, թե որոնք են առաքիչի աշխատանքին անցնելու համար կարևոր հատկանիշները: Հարցվողները հարցման ընթացքում ընտրել են հարցում իրականացնողների կողմից տրված հատկանիշները, ինչպես նաև այդ հատկանիշները դասակարգել են ըստ «Շատ կարևորից» մինչև «Բոլորովին կարևոր չէ» չափանիշներով, միևնույն ժամանակ պատասխանների տարբերակում առկա է եղել նաև «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակը: Հարցվողներն ընդգծել են, որ առաքիչ աշխատելու համար շատ կարևոր հատկանիշներն են՝ լինել շփվող և համբերատար (75,5%), իմանալ քաղաքի քարտեզը (55,9%), ունենալ տրասնպորտային միջոց վարելու իրավունք (40,2%), ունենալ աշխատանքային փորձ (36,8%), իմանալ տեղացիների լեզուն (35,8%), տիրապետել օտար լեզվին (27,5%), ինչպես նաև լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ ունենալ ժամանակավոր գրանցում (26,0%): Մանրամասն արդյունքները կարող եք գտնել Գծապատկեր 14-ում :

Գծապատկեր 14.



Հետաքրքիր է դիտարկել, թե հարցվողներն ինչպես են գտել իրենց աշխատանքը: Հարցվողների 37,7%-ը պատասխանել է, որ առաքիչի աշխատանքը գտել է ընկերների, 25,5%-ը՝ սոցիալական ցանցերի, 14,2%-ը՝ աշխատանքային հայտարարության միջոցով: 8,8%-ը՝ աշխատանքը գտել է Երևանում սովորելու ընթացքում, 7,4%-ը Հայաստան է ժամանել աշխատելու նպատակով, 3,4%-ը՝ այլ միջոցներով, 2,5%-ը՝ էլեկտրոնային հավելվածի միջոցով, 0,5% -ը՝ աշխատանքի տեղավորման գործակալության միջոցով:

Տվյալ հարցի վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել այն ըստ հարցվողների ազգության:

Ազգությամբ հայ առաքիչները գտել են իրենց աշխատանքը ընկերների (41,0%), սոցիալական ցանցերի (27,6%), աշխատանքային հայտարարության (17,3%) միջոցով, Երևանում սովորելու ընթացքում (7,7%), էլեկտրոնային հավելվածի (2,6%) և այլ միջոցներով (2,6%): Իսկ ինչ վերաբերում է աշխատանքի տեղավորման գործակալությանը և աշխատելու նպատակով ժամանած լինելու հարցին՝ ազգությամբ հայ առաքիչների տոկոսը կազմել է յուրաքանչյուրի դեպքում 0,6%:

Ազգությամբ ռուս առաքիչների մոտ ևս աշխատանք գտնելու առավել տարածված միջոցները հանդիսանում են ընկերները (33,3%), Երևանում սովորելու հանգամանքը (33,3%): Բացի դրանցից, ազգությամբ ռուս առաքիչներն իրենց աշխատանքը գտել են աշխատանքային հայտարարությունների (16,7%) և սոցիալական ցանցերի օգնությամբ (16,7%):

Ազգությամբ հնդիկ առաքիչների մոտ այլ պատկեր է: Հնդիկների մեծ մասը ժամանել է Հայաստանի Հանրապետություն աշխատանքի նպատակով, որը կազմում է ազգությամբ հնդիկ հարցվողների 34,1%-ը: Ազգությամբ հնդիկ առաքիչների մի մասն իր աշխատանքը գտել է ընկերների (29,3%), սոցիալական ցանցերի միջոցով (19,5%), Երևանում սովորելու ընթացքում (9,8%), աշխատանքային հայտարարության (4,9%) և էլեկտրոնային հավելվածի օգնությամբ (2,4%):

Գծապատկեր 15.



Գծապատկեր 16.

Ինչպե՞ս եք գտել աշխատանքը



Ուշադրության արժանի է այն փաստը, թե հարցվող առաքիչներն արդյոք երբևէ հանդիպել են իրենց գործատուներին: Գծապատկեր 17-ում արծարծված են հարցման արդյունքները:

Գծապատկեր 17.



Գծապատկեր 18-ում ներկայացված են Menu.am, Glovo, Yandex eats կազմակերպություններում աշխատող առաքիչների պատասխանները տվյալ հարցի վերաբերյալ: Menu.am կազմակերպությունում հարցվող առաքիչներից 32,6%-ը նշել է, որ գործատուի հետ մշտապես կապի մեջ է, 32,6%-ը՝ երբեմն

հանդիպում է գործատուի հետ, 4,7%-ը՝ հեռախոսով խոսել է, սակայն չի հանդիպել, 30,2%-ը՝ չի հանդիպել և չի ճանաչում գործատուին, 0,0%-ը՝ դժվարացել է պատասխանել: Այլ պատկեր է Glovo կազմակերպությունում, այստեղ 12,4%-ն է մշտապես կապի մեջ, 34,8%-ը՝ երբեմն հանդիպում է գործատուին, 2,2%-ը խոսել է հեռախոսով, բայց չի հանդիպել, 47,2%-ը՝ չի հանդիպել և չի ճանաչում գործատուին, իսկ 3,4%-ը՝ դժվարացել է պատասխանել: Yandex eats կազմակերպության հարցվող առաքիչների 50,9%-ը նշել է, որ մշտապես կապի մեջ է գործատուի հետ, 14,0%-ը երբեմն հանդիպում է նրան, 3,5 %-ը խոսել է հեռախոսով, սակայն չի հանդիպել, 29,8%-ը չի հանդիպել և չգիտի ով է իր գործատուն, 1,8 %-ը դժվարացել է պատասխանել:

Գծապատկեր 18.



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի ընդունման հիման վրա: Այդ իսկ պատճառով առաքիչների աշխատանքային պայմանների ուսումնասիրության համար կարևոր էր հարցման մեջ ներառել աշխատանքային պայմանագրի առկայության հարցը: Հարցվողների 60,3%-ը պատասխանել է, որ կնքել է աշխատանքային պայմանագիր, 3,9%-ը կնքել է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր, իսկ 1,0%-ը՝ այլ պայմանագիր: Ցավոք հարկ է նշել, որ աշխատողների մի մասը պաշտպանված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, քանի որ հարցվողների 19,1%-ն աշխատում է առանց որևէ պայմանագրի ու պայմանավորվածության, 7,4%-ն ունի բանավոր պայմանավորվածություն գործատուի հետ, 3,9%-ն ունի բանավոր

պայմանավորվածություն իր կուրատորի հետ: Հարցվողների շրջանում եղել են այնպիսի աշխատողներ, ովքեր նույնիսկ դժվարացել են պատասխանել վերոնշյալ հարցին (4,4 %):

Գծապատկեր 19.



Ստորև զետեղված Գծապատկեր 20-ում պատկերված են պայմանագրի առկայության վերաբերյալ հարցման արդյունքները ըստ կազմակերպությունների: Հարկ է նշել, որ Yeremyan projects, Buy.am, KFC կազմակերպությունների հարցվող բոլոր առաքիչները նշել են, որ ունեն պայմանագրեր:

Գծապատկեր 20.



Աշխատանքային պայմանագրի առկայության հետ մեկտեղ անհրաժեշտ է պարզել, թե հարցվողները որքանով են տիրապետում իրենց աշխատանքային իրավունքներին ու պարտականություններին և որքանով են իրազեկ իրենց աշխատանքային պայմաններից:

Գծապատկեր 21.



Գծապատկեր 21-ից պարզ է դառնում, որ հարցվողների 71,6%-ը լիովին, 24,5%-ը մասամբ տիրապետում են իրենց աշխատանքային պարտակա-նություններին, իսկ 2,5%-ը հիմնականում, 1,5%-ը ընդհանրապես չեն տիրապետում իրենց աշխատանքային պարտականություններին: Ինչ վերաբերում է աշխատանքային իրավունքներին՝ հարցվողների 61,3%-ը լիովին, 30,9%-ը մասամբ տիրապետում են իրենց իրավունքներին, իսկ 5,9%-ը հիմնականում և 2,0%-ը ընդհանրապես չեն տիրապետում: Աշխատանքային պայմաններին վերաբերյալ լիավորին իրազեկված է 66,7%-ը, մասամբ՝ 28,9%-ը, իսկ 2,9%-ը հիմնականում և 1,5%-ը ընդհանրապես իրազեկված չէ:

Հետաքրքիր է այն փաստը, որ հարցվող աշխատողները հիմնականում բավարարված են իրենց աշխատանքային պայմաններով: Հարցման արդյունքները զետեղված են Գծապատկեր 22-ում:

Գծապատկեր 22.



Աղյուսակ 1. Որքանո՞վ եք բավարարված Ձեր աշխատանքային պայմաններով /Վատ եղանակային պայմանների համար պաշտպանիչ հագուստ կամ համազգեստ ինչպե՞ս եք ձեռք բերում

	Գնել եմ	Նվեր եմ ստացել	Գործատուն է տրամադրել	Վարձակալում եմ	Ընկերներից ժամանակավոր վերցնում եմ	Չեմ կրում պաշտպանիչ հագուստ
Շատ բավարարված եմ	**21,4%**	**37,5%**	**45,5%**	25,0%	40,0%	19,2%
Որոշ չափով բավարարված եմ	51,8%	37,5%	43,2%	0,0%	40,0%	57,7%
Այդքան էլ բավարարված չեմ	17,9%	0,0%	9,1%	25,0%	0,0%	19,2%
Բոլորովին բավարարված չեմ	8,0%	25,0%	2,3%	50,0%	20,0%	3,8%
Դժվարանում եմ պատասխանել	,9%	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 152-րդ հոդվածի դրույթներով կարգավորվում է աշխատավայրում աշխատողների հանգստի և սնվելու համար ընդմիջման հարցը: Վերոնշյալ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողների մեծամասնությունն ունի կնքված աշխատանքային պայմանագիր, մինչդեռ Գծապատկեր 23-ը նկարագրում է, որ հարցվող աշխատողները չեն կարողանում օգտվել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված իրենց աշխատանքային իրավունքից: Համաձայն Գծապատկեր 23-ում նկարագրված տեղեկատվության՝ հարցվողների 12,7%-ը շատ հաճախ, 25,0%-ը

հաճախ, իսկ 18,6%-ը երբեմն չի կարողանում սնվել իր աշխատանքային օրվա ընթացքում:

Գծապատկեր 23.



Գծապատկեր 24-ում պատկերված է, թե հարցվողներն ինչպես են ընդմիջում անում:

Գծապատկեր 24.



Առաքիչներն իրենց աշխատանքի ընթացքում հանդիպում են բազմաթիվ խնդիրների, որոնք բնորոշ չեն այլ ոլորտի աշխատողներին: Այդպիսի խնդիր-ներից է նորմալ աշխատանքային պայմաններ ունենալը՝ ի դեմս սանհանգույցի: Աշխատանքի բնույթից ելնելով՝ նրանք ստիպված են լինում օգտվել տարածքի սանհանգույցից: Այս խնդրի առկայությունը հաստատվում է Գծապատկեր 25-ում զետեղված հարցման արդյունքներով:

Գծապատկեր 25.



Ելնելով հարցումների արդյունքներից՝ պարզվում է, որ հարցվող առաքիչ-ների մեծ մասն այն կարծիքին է, որ իրենց աշխատանքային իրավունքները չեն ոտնահարվում: Համաձայն Գծապատկեր 26-ի՝ միայն հարցվողների 14,7%-ն է գտնում, որ շատ հաճախ, իսկ 21,6%-ն՝ երբեմն ոտնահարվում են իրենց աշխատանքային իրավունքները:

Գծապատկեր 26.



Համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատան-քային հարաբերության վերաբերյալ» № 190–րդ Հանձնարարականի 9-րդ կետի՝ անհատական աշխատանքային իրավահարաբերությունների պայմաննե-րում աշխատողների պաշտպանության ազգային քաղաքականության նպա-

տակների համար այդպիսի իրավահարաբերության առկայությունը պետք է առաջին հերթին որոշվի այն փաստերի հիման վրա, որոնք հաստատում են աշխատանքի կատարումը և աշխատողի վարձատրության վճարումը, չնայած այն բանին, թե ինչպես են այս աշխատանքային հարաբերությունները բնութագրվում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 82-րդ հոդվածով սահմանվում է , որ յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի նաև առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունք այլ իրավունքների հետ մեկտեղ: Ի լրումն անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլուխն ամբողջությամբ վերաբերում է աշխատողների ավտանգությանը և առողջությանը:

Ելնելով Աշխատանքի միջազգային կազմակերպության վերը նշված Հանձնարարականից՝ պետք է եզրակացնել, որ անհրաժեշտ չէ աշխատանքային պայմանագրի առկայություն, որպեսզի առանց աշխատանքային պայմանագիր ունեցող աշխատողների վրա տարածվեն աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության վերաբերող դրույթները:

Հարցում իրականացնողներն առաքիչների աշխատանքն անվտանգ կամ վտանգավոր դիտարկելու նպատակով հարցվող առաքիչներին ուղղել են հետևյալ հարցը, թե իրենց կարծիքով իրենց աշխատանքն անվտանգ է առողջության համար, թե ոչ:

Հարցվողների 2,9%-ը դժավարացել է պատասխանել տվյալ հարցին, մինչդեռ 16,2%-ը՝ բոլովին անվտանգ չէ, 31,4%-ը՝ աշխատանքն այդքան անվտանգ չէ, 32,4%՝ կարելի է ասել՝ անվտանգ է: Հարկ է նշել, որ 17,2%-ն է միայն նշել, որ լիովին անվտանգ է:

Գծապատկեր 27.



Աղյուսակ 2. Ձեր կարծիքով՝ Ձեր աշխատանքն անվտա՞նգ է առողջության համար (n=204)

	Լիովին անվտանգ է	Կարելի է ասել՝ անվտանգ է	Այդքան էլ անվտանգ չէ	Բոլորովին անվտանգ չէ	Դժվարանում եմ պատասխանել
Menu.am	**37,1%**	15,2%	18,8%	12,1%	66,7%
Glovo	17,1%	**43,9%**	**45,3%**	**69,7%**	33,3%
Yandex eats	**31,4%**	**30,3%**	26,6%	27,3%	0,0%
Այլ	5,7%	3,0%	0,0%	0,0%	0,0%
Yeremyan projects	2,9%	7,6%	3,1%	0,0%	0,0%
Buy.am	2,9%	0,0%	4,7%	3,0%	0,0%
KFC	2,9%	0,0%	3,1%	0,0%	0,0%
Ընդհանուր	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**

Աղյուսակ 2-ից հետաքրքիր է առանձնացնել Glovo կազմակերպության հարցվող առաքիչների պատասխանները, քանի որ 69,7%-ը դիտարկել է իր աշխատանքը որպես բոլորովին անվտանգ չէ, 45,3 %-ը՝ այդքան էլ անվտանգ չէ, 43,9%-ը՝ կարելի է ասել անվտանգ չէ, 17,1%-ը՝ լիովին անվտանգ է, 33,3%-ը դժավարացել է պատասխանել:

Ուսումնասիրության տեսանկյունից անհրաժեշտ էր հարցվողներից իմանալ, թե նրանք ունեն ապահովագրություն, եթե այո՝ ինչպիսի ապահովագրություն: Գծապատկեր 28-ը և Գծապատկեր 29-ը տալիս են լիարժեք պատկերացում: Հարցվողների 78,9 % -ը նշել է, որ չունի ապահովագրություն, 15,7%-ը՝ ունի ապահովագրություն, 5,4 %-ը դժվարացել է պատասխանել:

Ապահովագրության առկայության դեպքում 47,8%-ը պատասխանել է, որ ունի առողջության ապահովագրություն, 26,1%-ը՝ անվտանգության, 21,7%-ը շարժական գույքի, 2,2%-ը դժավարացել է պատասխանել, 2,2%-ը՝ անշարժ գույքի:

Գծապատկեր 28.



Գծապատկեր 29.



Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 208-րդ հոդվածը սահմանում է, որ գործատուն երաշխավորում է աշխատանքի համար անհրաժեշտ գործիքների, սարքավորումների, հատուկ հագուստի և անհատական ու կոլեկտիվ պաշտպանության այլ միջոցների անվճար տրամադրումը աշխատողին: Այդ դեպքում, երբ աշխատողն է իրեն պատկանող միջոցներով գնում այդ ամենը, ապա գործատուն պարտավոր է հատուցել այդ միջոցների մաշվածության համար կամ փոխհատուցել: Հետաքրքիր է, թե արդյոք առաքման ոլորտում աշխատողների շրջանում կիրարկվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված այս դրույթը: Հարցվողների պատասխանների արդյունքներից երևում է, որ հարցվողների

գործատուների մեծամասնությունը չի ապահովում աշխատողներին աշխատանքային հագուստով: Հարցվողների միայն 31,4 %-ն է նշել, որ գործատուն է ապահովում նրանց աշխատանքային հագուստով:

Գծապատկեր 30.



Աղյուսակ 3. Արդյոք գործատուն ապահովո՞ւմ է Ձեզ աշխատանքային հագուստով (n=204)

	Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել
Menu.am	25,0%	19,4%	0,0%
Glovo	**48,4%**	**41,7%**	0,0%
Yandex eats	15,6%	**33,1%**	**100,0%**
Այլ	1,6%	2,2%	0,0%
Yeremyan projects	9,4%	1,4%	0,0%
Buy.am	1,6%	2,9%	0,0%
KFC	1,6%	1,4%	0,0%
Ընդհանուր	100,0%	100,0%	100,0%

Իսկ ինչ վերաբերում է վատ եղանակային պայմանների համար պաշտպանիչ հագուստի կամ համազգեստի ձեռքբերմանը, պետք է նշել, որ այստեղ նույնպես չեն պահպանվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դրույթները, քանի որ հարցվողների 54,9%-ը պատասխանել է, որ պաշտպանիչ հագուստը և համազգեստը ինքնուրույն է գնել, 12,7%-ը չի կրում պաշտպանիչ հագուստ, 3,9%-ը նվեր է

ստացել, 2,5% ընկերներից ժամանակավոր է վերցրել, 2,0%-ը վարձակալում է, 1,5%-ը դժվարացել է պատասխանել, 1,0% -ը նշել է այլ տարբերակ: Անհրաժեշտ է նշել, որ հարցվողների 21,6%-ն է նշել, որ պաշտպանիչ հագուստը տրամադրվել է գործատուի կողմից: Այստեղից կարելի է փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում է առաքման ոլորտի համար աշխատողների անվտանգության և առողջության վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերը, որի հետևանքով դժվարանում է պարտադրել գործատուներին ապահովել աշխատողների անվտանգության ապահովումը և առողջության պահպանումը և դրանց վերահսկումը Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից: Նրանց վրա տարածվում են ընդհանուր դրույթները:

Գծապատկեր 31.



Տրանսպորտային միջոցների առկայությունը կարևոր նշանակություն ունի առաքիչների համար, քանի որ դրանք ազդում են աշխատանքի արդյունավետության և առաքումների քանակի վրա, ինչու ոչ նաև անվտանգության վրա: Առաքիչների կողմից տրասնպորտի տեսակի ընտրությունից է կախված առաքումների արագությունը: Առաքիչները, քաղաքի ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով, ընտրում են հեծանիվներ, մոտոցիկլետներ, սկուտերներ՝ մոռանալով անվտանգության գործոնը: Պետք է նշել, որ ավտոմեքենաներն անվտանգության տեսանկյունից ավելի ապահով են, սակայն փողոցների ծանրաբեռնվածության պատճառով կարող են առաքումը կատարել պլանավորված ժամից ավելի ուշ: Իհարկե, տրանսպորտային միջոցն ընտրելիս հաշվի են առնվում նաև ծախսերը: Հարցմամբ պարզ է դարձել, որ աշխատանքներն իրականացնելիս հարցվողների 40,2%-ն օգտագործում է հեծանիվ, 25,5% -ն օգտագործում է մոտոցիկլ/սկուտեր, 13,2%-ն առաքումն

իրականացնում է ոտքով, 9,3%-ն օգտագործում է ինքնագլոր, 6,4%-ը առաքումն իրականացնում մեքենայով, 4,9%-ն օգտվում է հասարակական տրանսպորտից, 0,5% -ն օգտվում է տրասնպորտի այլ միջոցներից:

Գծապատկեր 32.



Գծապատկեր 33-ից երևում է, որ տրանսպորտային միջոցները հարցվողների կողմից գնվել (55,4%) կամ վարձակալվել են (14,7%): 5,4%-ը նշել է, որ գործատուն է տրամադրել, 4,4%-ը նվեր է ստացել, 1,5%-ը վերցրել է ժամանակավորապես ընկերներից:

Գծապատկեր 33.



Հասարակական տրանսպորտի օգտվողների շրջանում հարցվել է, թե ով է վճարում հասարակական տրանսպորտից օտվելու համար: Հասարակական տրանսպորտից օգտվող հարցվողների 80,0%-ը նշել է, որ ինքն է վճարում, իսկ 20,0%-ը՝ գործատուն:

Գծապատկեր 34.



Համաձայն Աղյուսակ 4-ի՝ հասարակական տրանսպորտից օգտվող Menu.am-ի առաքիչները նշել են, որ իրենք են վճարում հասարակական տրանսպորտի համար (100,0%), Glovo-ի դեպքում 33,3%-ը պատասխանել է, որ գործատուն է վճարում, 66,7%-ն՝ իրենք, իսկ Yandex eats-ի դեպքում 25,0%-ը՝ գործատուն, 75,0%՝ իրենք:

Աղյուսակ 4. Եթե օգտվում եք հասարակական տրանսպորտից, ապա ով է վճարում դրա համար (n=10)

	Menu.am	Glovo	Yandex eats
Գործատուն	0,0%	**33,3%**	**25,0%**
Ես	100,0%	66,7%	75,0%
Ընդհանուր	**100,0%**	**100,0%**	**100,0%**

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաքիչների շրջանում աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը պարզելու նպատակով հարցումն իրականացնողները հարցվող առաքիչներին հարցրել են, թե ով պետք է պաշտպանի իրենց աշխատանքային իրավունքները խախտումների դեպքում:

Գծապատկեր 35.



Ըստ Գծապատկեր 35-ի՝ հարցվող առաքիչներից 42,2% գտնում է, որ իրենք պետք է պաշտպանեն իրենց աշխատանքային իրավունքները, 6,9%-ը՝ Հայաստանի պետական կառույցները, 3,9%-ը դժվարացել է պատասխանել, 2,0%-ը՝ աշխատողների միությունը կամ արհմիությունը, 1,5%-ը՝ Հնդկաստանի, Ռուսաստանի, Իրանի կառավարությունը, 1,5%-ը՝ առաքիչների խումբը, 1,5% -ը՝ հեղինակավոր ազգակիցը, 0,5%՝ կուրատորը: 0,5%-ը նշել է այլ տարբերակը: Հետաքրքիր է այն փաստը, որ 39,7%-ը նշել է, որ աշխատանքային իրավունքների խախտման դեպքում աշխատողներին պետք է պաշտպանի գործատուն: Մինչդեռ, գործատուն է խախտում աշխատողների աշխատանքային իրավունքները՝ չապահովելով աշխատանքային նորմալ պայմաններ:

Առաքման ոլորտում արհմիության առկայության հարցին հարցվողների 68,1%-ը պատասխանել է ոչ առկա չէ, 21,6%-ը դժվարացել է պատասխանել, 10,3%՝ այո:

Գծապատկեր 36.



Աղյուսակ 5. Կա՞ արդյոք աշխատողների միություն կամ արհմիություն ձեր ոլորտում (n=204)

	Menu.am	Glovo	Yandex eats	Այլ	Yeremyan projects	Buy.am	KFC
Այո	14,0%	3,4%	14,0%	50,0%	12,5%	20,0%	33,3%
Ոչ	**65,1%**	**66,3%**	**75,4%**	50,0%	62,5%	80,0%	66,7%
Դժվարանում եմ պատասխանել	20,9%	30,3%	10,5%	0,0%	25,0%	0,0%	0,0%
Ընդհանուր	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**

Ձեր ոլորտում աշխատողների միության կամ արհմիության առկայության հարցին այո պատասխանողներին տրվել է մեկ այլ հարց, թե արդյոք անդամակցում են այդ արհմիությանը կամ աշխատողների միությանը: 10,3 %-ի 6,4%-ը պատասխանել է այո, իսկ 3,9%-ը՝ ոչ:

Գծապատկեր 37.



Չնայած վերը նշվածի, հարցվողների 70,6%-ը պատրաստ են անդամակցել այնպիսի կառույցի, որը կպաշտպանի իրենց խախտված իրավունքները (տե՛ս Գծապատկեր 38): Անհրաժեշտ է արձանագրել, որ KFC կազմակերպության հարցվող առաքիչների մեծամասնությունը (66,7%) պատասխանել է, որ չի անդամակցի այն կառույցի, որը կպաշտպանի իրենց խախտված իրավունքները: Սակայն մյուս կազմակերպությունների առաքիչների պատասխաններից պարզ է դառնում, որ իրենց իրավուքների պաշտպանության համար կցանկանան անդամակցել (տե՛ս Աղյուսակ 6):

Գծապատկեր 38.



Աղյուսակ 6. Եթե իմանաք, որ կա կառույց, որը կպաշտպանի Ձեր խախտված իրավունքները, արդյոք կանդամակցեք (n=204)



ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Արդյո՞ք առաքիչներն ունեն արժանապատիվ աշխատանքային պայմաններ և օգտվում են առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի իրավունքից: Հարցումները հնարավորություն են տալիս ստանալ վերը նշված հարցի պատասխանը: Հարցվողների մեծամասնությունը (83,8%) պատասխանել է առ այն, որ իրենք են որոշում, թե որքան պետք է աշխատեն և որքան հանգստանան, իսկ 15,2%-ը՝ առկա է ֆիքսված մինիմալ և մաքսիմալ աշխատաժամանակ: 1,0%-ը դժվարացել է պատասխանել: Հարցվողների 33,8%-ը նշել է, որ մեկ օրվա ընթացում աշխատում է 9-12 ժամ, 31,9%-ը՝ 8 ժամ, 22,1%-ը՝ 5-8 ժամ, 6,9%-ը՝ 2-4 ժամ: Հարցվողների շրջանում եղել են այնպիսի առաքիչներ, որոնք աշխատում են օրվա մեջ 12 ժամից ավելի (4,4%): 0,5%-ը դժավարացել է պատասխանել, իսկ մյուս 0,5%-ը նշել է, որ աշխատում է մինչև 2 ժամ:

Գծապատկեր 39.



Աղյուսակ 7. Արդյո՞ք Դուք ինքներդ եք որոշում, թե որքան պետք է աշխատեք և որքան հանգստանաք (n=204)

	Menu.am	Glovo	Yandex eats	Այլ	Yeremyan projects	Buy.am	KFC
Այո, ինքս եմ որոշում	88,4%	89,9%	80,7%	25,0%	62,5%	80,0%	33,3%
Ոչ, կա ֆիքսված մինիմալ և մաքսիմալ աշխատաժամանակ	9,3%	10,1%	17,5%	75,0%	37,5%	20,0%	66,7%
Դժվարանում եմ պատասխանել	2,3%	0,0%	1,8%	0,0%	0,0%	0,0%	0,0%
Ընդհանուր	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**

Գծապատկեր 40.



Աղյուսակ 8 . Օրվա մեջ քանի՞ ժամ եք աշխատում միջինում (n=204)

	Menu.am	Glovo	Yandex eats	Այլ	Yeremyan projects	Buy.am	KFC
Մինչև 2 ժամ	2,3%	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%
2-4 ժամ	11,6%	4,5%	8,8%	0,0%	0,0%	0,0%	0,0%
5-8 ժամ	23,3%	21,3%	12,3%	75,0%	**50,0%**	**60,0%**	0,0%
8 ժամ	**41,9%**	32,6%	26,3%	0,0%	25,0%	20,0%	33,3%
9-12 ժամ	16,3%	**39,3%**	**45,6%**	25,0%	25,0%	0,0%	33,3%
12 ժամից ավել	4,7%	2,2%	5,3%	0,0%	0,0%	20,0%	33,3%
Դժվարանում եմ պատասխանել	0,0%	0,0%	1,8%	0,0%	0,0%	0,0%	0,0%
Ընդհանուր	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**

Գծապատկեր 41-ը թույլ է տալիս պատկերացում կազմել, թե առաքիչներն ինչ հաճախականությամբ են աշխատում գիշերային ժամերին: Հարցվողների շրջանում 48,0%-ը նշել է, որ երբեք չի աշխատում գիշերները: Արձանագրվել է, որ հարցվող առաքիչների շրջանում եղել են առաքիչներ, որոնք ամեն օր աշխատում են գիշերները: Դրանք կազմում են հարցվող առաքիչների 14,2%-ը: Ամենօրյա գիշերային աշխատանք իրականացնող առաքիչների մեծամասնությունը տոկոսային հարաբերությամբ ավելի բարձր են հետևյալ կազմակերպություններում՝ Yandex eats (41,4%), Glovo (37,9%), Menu.am (20,7%): Սրանից հետևում է, որ գիշերային աշխատողները պետք է ստանան գիշերային աշխատանքի համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային

օրենսգրքով սահմանված հավելավճար կամ փոխհատուցում, կամ լրացուցիչ վարձատրություն, քանի որ հարցվող ոչ բոլոր առաքիչներն ունեն աշխատանքային պայմանագրեր: Գծապատկեր 42-ում զետեղված տեղեկատվության համաձայն՝ գիշերային ժամերին աշխատող հարցվող առաքիչների 31,6%-ը միշտ, իսկ 10,5%-ը հազվադեպ ստանում են վարձատրություն գիշերային աշխատանքի դիմաց: Սակայն, հարցվողների 29,8%-ը երբեք չի ստացել կամ ստացել է հազվադեպ (21,1%): Աղյուսակ 10-ում ներակայացված են տվյալներն ըստ կազմակերպությունների:

Գծապատկեր 41.



Աղյուսակ 9. Ի՞նչ հաճախականությամբ եք գիշերներն աշխատում (n=204)

	Ամեն օր	2 օրը մեկ	3 օրը մեկ	Շաբաթը մեկ	Ավելի հազվադեպ	Երբեք	Դժվարանում եմ պատասխանել
Menu.am	20,7%	**47,1%**	16,7%	20,0%	15,9%	20,4%	0,0%
Glovo	37,9%	23,5%	16,7%	20,0%	**43,2%**	**50,0%**	**80,0%**
Yandex eats	**41,4%**	23,5%	**66,7%**	**40,0%**	36,4%	18,4%	20,0%
Այլ	0,0%	0,0%	0,0%	20,0%	4,5%	1,0%	0,0%
Yeremyan projects	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%	8,2%	0,0%
Buy.am	0,0%	5,9%	0,0%	0,0%	0,0%	4,1%	0,0%
KFC	3,4%	0,0%	0,0%	0,0%	0,0%	2,0%	0,0%
Ընդհանուր	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**

Գծապատկեր 42.



Աղյուսակ 10. Գիշերային աշխատանքի դիմաց հատուցում, լրացուցիչ վարձատրություն կամ լրավճար ստանո՞ւմ եք (n=57)

	Այո, միշտ	Հաճախ	Հազվադեպ	Երբեք	Դժվարանում եմ պատասխանել	Հրաժարվում եմ պատասխանել
Menu.am	**38,9%**	16,7%	25,0%	23,5%	25,0%	0,0%
Glovo	11,1%	**50,0%**	33,3%	**41,2%**	25,0%	0,0%
Yandex eats	**33,3%**	33,3%	**41,7%**	**41,2%**	**50,0%**	0,0%
Այլ	5,6%	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%
Yeremyan projects	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%
Buy.am	5,6%	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%
KFC	5,6%	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%
Ընդհանուր	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	0,0%

Աշխատաժամանակի ուսումնասիրության հետ զուգահեռ անհրաժեշտ է ուսումնասիրել առաքիչների հանգստի համար հատկացվող ժամանակը: Ըստ հարցվողների՝ 6 օրյա աշխատանքային շաբաթով աշխատում է 47,1%, իսկ 31,9%-ը՝ աշխատում է 7 օրյա գրաֆիկով (տե՛ս Գծապատկեր 44): 7 օրյա աշխատանքային շաբաթով աշխատանքի դեպքում աշխատողները հնարավորություն չեն ունենում օգտվելու հանգստի իրենց իրավունքից, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ աշխատողների առողջության և անվտանգության վրա: Աշխատանքային օրվա ընթացքում հանգստի

տևողության վերաբերյալ հարցման արդյունքներից պետք է առանձնացնել այն, որ հարցվողների 23,0%-ին չի հատկացվում հանգստի ժամ, հետևաբար, խախտվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը, ինչպես նաև արժանապատիվ աշխատանքային պայմաններ ունենալու աշխատողների իրավունքը (տե՛ս Գծապատկեր 43): Ուշադրության արժանի են Գծապատկեր 45-ում ներկայացված հարցման արդյունքները, համաձայն որի, հարցվողների 39,7% լիովին, իսկ 37,3%-ը որոշ չափով բավարարված են իրենց աշխատաժամանակի և հանգստի տևողությամբ:

Գծապատկեր 43.



Գծապատկեր 44.



Աղյուսակ 11. Աշխատանքային օրվա ընթացքում որքա՞ն ժամանակ է հատկացվում հանգստի համար (n=204)

	Չի հատկացվում	Մինչև 30 րոպե	31-60 րոպե	1-2 ժամ	2-4 ժամ	4 ժամից ավել	Դժվարանում եմ պատասխանել
Menu.am	14,9%	18,0%	19,1%	27,3%	**37,5%**	**40,0%**	28,6%
Glovo	**42,6%**	**42,0%**	**48,9%**	**60,6%**	12,5%	20,0%	21,4%
Yandex eats	34,0%	**40,0%**	23,4%	6,1%	**37,5%**	40,0%	21,4%
Այլ	0,0%	2,0%	2,1%	3,0%	0,0%	0,0%	7,1%
Yeremyan projects	10,6%	0,0%	0,0%	3,0%	12,5%	0,0%	7,1%
Buy.am	4,3%	0,0%	4,3%	0,0%	0,0%	0,0%	7,1%
KFC	0,0%	0,0%	2,1%	3,0%	0,0%	0,0%	7,1%
Ընդհանուր	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**

Աղյուսակ 12. Շաբաթվա ընթացքում քանի՞ օր եք աշխատում (n=204)

	3	4	5	6	7	Դժվարանում եմ պատասխանել
Menu.am	0,0%	12,5%	31,3%	17,7%	23,1%	0,0%
Glovo	0,0%	**37,5%**	**56,3%**	**41,7%**	**41,5%**	50,0%
Yandex eats	**100,0%**	**37,5%**	12,5%	24,0%	**38,5%**	50,0%
Այլ	0,0%	0,0%	3,1%	3,1%	0,0%	0,0%
Yeremyan projects	0,0%	0,0%	0,0%	8,3%	0,0%	0,0%
Buy.am	0,0%	12,5%	0,0%	3,1%	1,5%	0,0%
KFC	0,0%	0,0%	0,0%	2,1%	1,5%	0,0%
Ընդհանուր	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**

Գծապատկեր 45.



Աղյուսակ 13. Արդյոք Ձեզ բավարարո՞ւմ է Ձեր աշխատաժամանակի և հանգստի տևողությունը (n=204)

	Menu.am	Glovo	Yandex eats	Այլ	Yeremyan projects	Buy.am	KFC
Լիովին բավարարում է	**51,2%**	28,1%	**36,8%**	50,0%	**75,0%**	**60,0%**	**100,0%**
Որոշ չափով բավարարում է	27,9%	**43,8%**	**40,4%**	25,0%	25,0%	0,0%	0,0%
Որոշ չափով չի բավարարում	9,3%	12,4%	10,5%	25,0%	0,0%	20,0%	0,0%
Այդքան էլ չի բավարարում	11,6%	13,5%	10,5%	0,0%	0,0%	20,0%	0,0%
Դժվարանում եմ պատասխանել	0,0%	2,2%	1,8%	0,0%	0,0%	0,0%	0,0%
Ընդհանուր	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**

Առաքման ոլորտի աշխատանքի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ առաքիչները կարող են աշխատել ոչ աշխատանքային կամ տոնական օրերին: Այս փաստը հաստատվում է հարցումների արդյունքներով: Գծապատկեր 46-ի համաձայն՝ հարցվողների 40,2 %-ը գրեթե միշտ, 21,6%-ը հաճախ աշխատում է ոչ աշխատանքային կամ տոնական օրերին, իսկ 26,0%-ը աշխատում է հազվադեպ, 9,8%-ն էլ երբեք չի աշխատել: Ցավոք, պետք է նշել, որ ոչ

աշխատանքային կամ տոնական օրերին աշխատող հարցվողների 52,0%-ը չի ստանում հատուցում: Ոչ աշխատանքային կամ տոնական օրերին աշխատող հարցվողների մի մասը նշել է, որ հատուցումը կախված է պատվիրատուի (8,9%) կամ գործատուի (7,8%) հայեցողությունից (տե՛ս Գծապատկեր 47):

Գծապատկեր 46.



Աղյուսակ 14. Որքա՞ն հաճախ եք ոչ աշխատանքային կամ տոնական օրերին աշխատում (n=204)

	Գրեթե միշտ	Հաճախ	Հազվադեպ	Երբեք	Դժվարանում եմ պատասխանել	Հրաժարվում եմ պատասխանել
Menu.am	17,1%	**20,5%**	**20,8%**	30,0%	75,0%	0,0%
Glovo	**51,2%**	43,2%	39,6%	35,0%	0,0%	0,0%
Yandex eats	28,0%	**31,8%**	20,8%	**35,0%**	25,0%	100,0%
Այլ	2,4%	2,3%	1,9%	0,0%	0,0%	0,0%
Yeremyan projects	0,0%	4,5%	7,5%	10,0%	0,0%	0,0%
Buy.am	2,4%	0,0%	5,7%	0,0%	0,0%	0,0%
KFC	1,2%	0,0%	3,8%	0,0%	0,0%	0,0%
Ընդհանուր	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%

Գծապատկեր 47.



Հարցվող առաքիչները առանձնացրել են սննդի առաքիչի աշխատանքում ամենակարևոր հատկանիշները, որոնք ներկայացված են ստորև.

Գծապատկեր 48.



Գծապատկեր 49-ում կատարվել է լավ աշխատանքի դիմաց տրվող խրախուսանքի և վատ աշխատանքի համար տույժի կամ աշխատավարձի պահումների վերաբերյալ համեմատություն:

Գծապատկեր 49.



Գծապատկեր 50.



Աղյուսակ 15. Աշխատանքի դիմաց խրախուսանք կամ տույժ ո՞ւմից եք ստանում /նշել բոլոր հնարավոր տարբերակները (n=261)

	Հաճախորդից	Ֆիրմայից, ումից վերցնում եմ առաքվող սնունդը	Հավելվածը սպասարկող ֆիրմայից/Գլովո, Յանդեքս, Մենյու.../	Դժվարանում եմ պատասխանել
Menu.am	20,3%	18,6%	20,7%	23,1%
Glovo	**53,4%**	25,6%	**46,0%**	**46,2%**
Yandex eats	26,3%	**34,9%**	25,3%	23,1%
Այլ	,8%	9,3%	1,1%	0,0%
Yeremyan projects	0,0%	14,0%	3,4%	0,0%
Buy.am	,8%	2,3%	3,4%	7,7%
KFC	,8%	2,3%	1,1%	0,0%
Ընդհանուր	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**

ՊԱՐՏԱԴԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի՝ բնակչության առողջության պահպանության նպատակով պարբերական բժշկական զննություն պետք է անցնեն սննդարդյունաբերության, առևտրի և հասարակական սննդի կազմակերպությունների աշխատողները: Սակայն, Գծապատկեր 51-ը ցույց է տալիս, որ առաքիչների մեծ մասը՝ 39,7%-ն ավելի հազվադեպ է անցնում պարտադիր բժշկական զննություն, 20,6%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին, իսկ 5,4%-ն ընդհանրապես հրաժարվել է պատասխանել այդ հարցին: Պարտադիր բժշկական զննությունը հիմնականում իրականացվում է հարցվողների միջոցներով, միայն 22,9%-ը վճարվել գործատուի կողմից (տե՛ս Գծապատկեր 52):

Գծապատկեր 51.



Գծապատկեր 52.



Գծապատկեր 53.



Գծապատկեր 54.



ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ արգելվում է պարտադիր կամ հարկադիր աշխատանքը: Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 3.2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Պարտադիր կամ հարկադիր աշխատանք է համարվում որևէ ձևի հարկադրանքի գործադրմամբ կամ գործադրման սպառնալիքի տակ անձից պահանջվող կամ անձի կողմից կատարվող ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի»:

Առաքիչները հանդիսանում են խոցելի խումբ, քանի որ չունեն բավարար իրավական պաշտպանություն, որպես առաքման ոլորտում աշխատողներ, կարող են լինել աշխատանքի նպատակով ժամանած այլ ազգության ներկայացուցիչներ: Ինչպես վերևում նշվել է ազգությամբ հնդիկ առաքիչների մեծ մասը ժամանել են Հայաստանի Հանրապետություն աշխատելու նպատակով:

Հարցվողների 14,2%-ը նշել է, որ լսել կամ հանդիպել է մարդկանց, ովքեր Հայաստանում աշխատում են ստիպողաբար՝ վախի կամ սպառնալիքի ազդեցությամբ, իսկ 85,8%՝ ոչ, չի լսել:

Գծապատկեր 54.



Գծապատկեր 55.



Գծապատկեր 56.



Առաքիչների աշխատանքում կարևորվում են նաև միջանձնային հարաբերությունները, որոնք կազմում են նրանց աշխատանքի բաղադրիչ մասը: Պատվիրատուների կողմից առաքիչների նկատմամբ հարգալից, գործնական, ընկերային վերաբերմունքը գերակշիռ է, որտեղից կարելի է եզրականացնել, որ հասարակության կողմից գնահատվում է նրանց աշխատանքը: Սա նաև փաստում է Գծապատկեր 58-ում զետեղված տեղեկատվությունը:

Գծապատկեր 57.



Գծապատկեր 58.



ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Ամփոփելով վերը նշված ադյունքները և ամբողջացնելով որակական հարցազրույցներից ստացված տեղեկատվությունը՝ կարելի է եզրահանգել, որ՝

1. հարցվողների մեծամասնությունը դիտարկում է իրենց աշխատանքը որպես հիմնական աշխատանք և եկամտի հիմնական աղբյուր,
2. առաքիչները հաճախ չեն կարողանում օգտվել սնվելու իրավունքից՝ ժամանակ չլինելու պատճառով,
3. առաքիչների մեծամասնությունը չունի առողջության կամ այլ ապահովագրություն,
4. հարցվողների գործատուների կեսից ավելին չի ապահովում աշխատողներին աշխատանքային հագուստով,
5. վատ եղանակային պայմանների համար պաշտպանիչ հագուստը կամ համազգեստը, ինչպես նաև տրասնպորտային միջոցը մեծամասամբ գնվել է հարցվողների անձնական ֆինանսական միջոցներով,
6. հասարակական տրանսպորտով օգտվող հարցվող առաքիչների 80%-ը ինքն է վճարում հասարակական տրանսպորտի ուղևորափոխադրման գումարը,
7. աշխատանքային իրավունքների պաշտպանության համար հարցվողները գտնում են, որ իրենք պետք է պաշտպանեն իրենց իրավունքները, սակայն հարցվողների մի մասը գտնում է, որ գործատուն պետք է պաշտպանի իրենց աշխատանքային իրավունքները,
8. հարցվողների մեծամասնությունը ցանկություն է հայտնել անդամակցել կառույցի, որը կպաշտպանի խախտված աշխատանքային իրավունքները,
9. արձանագրվել է, որ հարցվող առաքիչների մի մասը գիշերային աշխատանքի դիմաց չի վարձատրվում կամ հազվադեպ է վարձատրվում, ինչպես նաև չի պահպանվում շաբաթական աշխատաժամանակի տևողությունը,
10. հարցվող առաքիչները գրեթե միշտ աշխատում են ոչ աշխատանքային և տոնական օրերին և նշել են, որ այդ օրերին աշխատանքը դիտարկվում է որպես սովորական աշխատանքային օր,
11. պարտադիր բժշկական զննությունն իրականացվում է հիմնականում հարցվող առաքիչների ֆինանսական միջոցներով,
12. հարցվող առաքիչները նշել են, որ հանդիպել են Հայաստանում ստիպողաբար՝ վախի և սպառնալիքի ազդեցության տակ աշխատողների, որը կարող է գնահատվել որպես հարկադիր աշխատանք:

Այս ամենից ելնելով՝ պետք է նշել, որ առաքման ոլորտում առկա են աշխատանքային օրենսդրության վերաբերյալ իրազեկվածության պակաս: Աշխատանքային իրավունքների խախտման դեպքերում առաքիչները հստակ պատկերացում չունեն, թե ում պետք է դիմել և ով կարող է ներկայացնել նրանց իրավունքները և շահերը: Հարկ է նշել, որ իհարկե հարցվող առաքիչները ցանկություն են հայտնել անդամակցել կազմակերպությանը, որը կներկայացնի և կպաշտանի իրենց աշխատանքային իրավունքները և շահերը «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է, որ արհմիության անդամակցության համար անհրաժեշտ է ունենալ աշխատանքային պայմանագիր, մինչդեռ հարցված առաքիչների մի մասի մոտ բացակայում են աշխատանքային պայմանագրերը, հետևաբար վերջիններս աշխատում են ոչ ֆորմալ տնտեսությունում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հիմք ընդունելով Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատանքային հարաբերության վերաբերյալ» № 190–րդ Հանձնարարականը՝ ճանաչել աշխատանքային պայմանագիր չունեցող առաքիչներին որպես աշխատողներ, ինչի արդյունքում նրանք կօգտվեն աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքներից.
2. Մշակել առաքիչների համար աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանների վերաբերյալ նորմատիվ իրավական ակտ՝ միաժամանակ սահմանելով նաև անձնական պաշտպանության միջոցների ցանկը.
3. «Արհեստակցական միությունների» մասին Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել փոփոխություն՝ հնարավորություն տալով աշխատանքային պայմանագիր չունեցող աշխատողներին անդամակցել արհեստակցական միություններին.
4. Կազմակերպել առաքիչների շրջանում աշխատանքային օրենսդրության վերաբերյալ իրազեկման աշխատանքներ.
5. Սահմանել առաքիչների համար աշխատավարձի նվազագույն սանդղակ և սահմանափակել աշխատաժամանակի տևողությունը՝ առաքիչների համար արժանապատիվ աշխատանք սահմանելու համար.
6. Մշակել և ընդունել նորմատիվ իրավական ակտեր առաքիչների սոցիալական ապահովության վերաբերյալ, մասնավորապես առաքման աշխատանքի հետ փոխկապակցված վնասների ապահովագրության տրամադրման մասին.
7. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչականի մարմնին տալ հնարավորություն վերահսկել նաև այն առաքիչների աշխատանքի գործընթացը, որոնք չունեն աշխատանքային պայմանագիր: